Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 10

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 11-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Տիգրան Գալստյանը, Ազատ Զաքարյանը, Վահագն Մկրտչյանը, Վահե Մովսիսյանը, Կարեն Շահազիզյանը, Սամվել Շուխյանը, Նավասարդ Պետրոսյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը:

Հարգելի պատճառներով բացակայում էին Արտաշես Խաչատրյանը, Աշոտ Հունանյանը, Արմենակ Սարգսյանը և Բաբկեն Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Սամվել Սահակյանը:

Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

1. Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվությունը հաստատելու մասին:

   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/

2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

4. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

5. Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

6. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Աշտարակ քաղաքում իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ալեքսանդր Վռամի Հարությունյանի անունով փողոց անվանակոչելու մասին:

/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

Լ Ս Ե Ց Ի Ն - 1 - Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցողը նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվել, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջներից ելնելով:

Զեկուցողն առկա արդյունքները ներկայացրեց նաև տոկոսներով, որն ըստ եկամտային մասի կազմում է 91% և ծախսային մասի 43.5%:

Զեկուցման վերաբերյալ ամբողջական նյութերը հավելվածների և աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Կիսամյակային հաշվետվությունը լսելուց հետո զեկուցողին հարցեր տվեցին և ելույթ ունեցան Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը և Հ. Վարդանյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ տվեցին Շ. Վահանյանն ու համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Շանթ Վահանյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ արտոնությունները վերաբերվում են մեկ իրավաբանական և 14 ֆիզիկական անձի: Արտոնության տրամադրման ընդհանուր գումարը կազմում է՝ գույքահարկի մասով՝ 553.147 և հողի հարկի մասով՝ 92.290 ՀՀ դրամ:

Զեկուցողին հարցեր տվեցին և պարզաբանումներ ստացան Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը և Տ. Գալստյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

Օրակարգային հերթական հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Առաջարկվեց համաձայնություն տալ բնակավայրերի նշանակության 2600քմ և 1277քմ մակերեսով հողամասեր օտարելու /աճուրդ-վաճառքով/ համապատասխանաբար 191-008 և 777-019 ծածկագրերից, մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 50 և 55%-ի չափով:

Զեկուցողին հարցեր չտրվեցին:

Քվեարկության արդյունքում ***ՉԵՌՆՊԱՀ*** էր Ս. Օվոյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -4 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Արմեն Մնացականյանը:

Բաժնի պետն առաջարկեց համաձայնություն տալ կադաստրային արժեքի 100% մեկնարկային գնով աճուրդ-վաճառքով օտարելու 0.1671հա գյուղ. նշանակության հողակտոր, Աշտարակի տեղամասի 859-221 ծածկագրից:

Հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ և որոշակի պարզաբանումներ ուզեց լսել Սարիբեկ Օվոյանը:

Ավագանու անդամի հարցերին պատասխանեց Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում ընդունվեց միաձայն որոշում:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -5 - *Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին*

Զեկուցող Ա. Մնացականյանը նշեց, որ 221-044 ծածկագրով 9քմ հողամասն առաջարկվում է 20 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20.000 ՀՀ դրամ վճարով տրամադրել համայնքապետարան դիմած Դ. Հունանյանին:

Հողամասի գտնվելու վայրն ավելի կոնկրետ նշելու առաջարկով զեկուցողին հարց ուղղեց Ս. Օվոյանը:

Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետը նշեց, որ հողամասը գտնվում է Վ. Պետրոսյան փողոցի վրա:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -6 - *Հողամասերի փոխանակություն կատարելու մասին*

Արմեն Մնացականյանը ներկայացրեց նաև օրակարգային վեցերորդ հարցը:

Առաջարկվեց համաձայնություն տալ 036-027 ծածկագրում գտնվող 580քմ հողամասը փոխանակելու 02-001-0029-0001 ծածկագրից 654քմ հողամասի հետ:

Արված առաջարկությունը պաշտպանեցին նիստին ավագանու ներկա անդամներն ու հարցեր չհնչեցրեցին:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -7 - *Աշտարակ քաղաքում իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ալեքսանդր Վռամի Հարությունյանի անունով փողոց անվանակոչելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը, նշելով, որ Ա. Հարությունյանը զգալի ավանդ ունեցող անձնավորություն է, ներդրում ունի <Մուղնի> 1-ին թաղամասի /25 հողամասից մինչև N 144 բնակելի տուն ընկած հատված/ նշված հատվածի բարեկարգման հարցում:

Ալեքսանդր Հարությունյանի կենսագրությանը ծանոթանալու նպատակով զեկուցողին հարցեր տվեցին Ս. Օվոյանն ու Կ. Շահազիզյանը:

Արված առաջարկությանը դեմ արտահայտվեց Կ. Շահազիզյանը, բերելով մի շարք հակափաստարկներ:

Համայնքի ղեկավարի լրացուցիչ պարզաբանումից հետո անցկացված քվեարկության արդյունքում ընդունվեց որոշում:

ԴԵՄ քվեարկեց Կ. Շահազիզյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի հուլիսի 25-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ
ՏՊ
Ա.Հ.